Արձանագրություն N 2
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար թմրամիջոցների և թմրամիջոցներից կախվածության մոնիթորինգի տարեկան զեկույցի կազմման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» «Ապրիլի» 2018թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ք. Գյուրջյան

Հանձնաժողովի անդամներ Ն.Մարգարյան
Լ.Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ք.Գյուրջյան)

Ընդունել ի գիտություն, որ 27.03.18թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ	Կազմակերպության ՀՎՀՀ-ն
1	«Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	ք.Երևան, Կոմիտասի 49/4 info@nih.am	00011624

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ք.Գյուրջյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ք.Գյուրջյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացված հայտերի գնահատման և ամփոփման մասին

(Ք.Գյուրջյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ք.Գյուրջյան)

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվում է ստորև.

Մասնակցի անվանումը	*Գնային առաջարկ ՀՀ դրամով, այդ թվում*			*Նախահաշվային գին, ներառյալ բորոլ հարկերը և ծախսերը*
	Գինն առանց ԱԱՀ	*ԱԱՀ*	*Ընդհանուր*	
«Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	*10 416 666.67*	*2 083 333.33*	*12 500 000*	*12 500 000*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ք.Գյուրջյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Ք.Գյուրջյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/14» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ք.Գյուրջյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց առաջարկել «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Ք.Գյուրջյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/14» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ք.Գյուրջյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/14» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ք.Գյուրջյան

Անդամներ՝ ---------- Ն.Մագարյան

---------- Լ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան